

պարծելու եւս՝ որ մեր երբեմն-պատգամաւորն պսպիտի մեծ աստիճանի բարձրացած է: Գեռ մեր ակամօջաց մէջ կը հնչէ իւր ազգու ճառա-խօսութիւններուն հաճոյական ձայնը: Գեռ ցայս-օր կը տեսնենք մեր հօգուց աշուրներովն իւր մարտաօտարական անձն, որուն ին վստահութեամբ կը բարեմաղթենք որ իւր փառաւոր պաշտա-ման մէջ Աստուած իրեն մարի վայելուծն շնորհէ:

Կերչա-Հայաքարաջ: Ա. ՓԻՓԱՍ

ԲԱՆԱՍՑԵՂՆԱԿԱՆ

ՈՒ ՄՈՐՆ Ի Մ


Քեզ ո՞վ ազնիւ իմ՝ մայրիկ,
Ո՞րչափ ունիմ՝ ըսելիք.
Քանի՞օ՞ն եմ՝ պարտական
Ազնիւ սիրոյդ մայրական:

Դու կրթեցիր զիս ցայսօր
Անխոնջ ինամուրջ նորանոր.
Առանց քզի մայի ստոյգ
Տղայ մ՝անուտ եւ եղուկ.

Ընկերութեան մէջ անարգ
Ունայնածոն եւ դատարկ:
Քանի՞ ունիմ՝ արդ պարտիք
Քեզ սիրելիդ իմ՝ մայրիկ:

— Միշտ տընեցար ծրգամբ շատ,
Մերմանեցիր բայց առատ:
Ուրախ եղիր, մայր ազնիւ,
Հունձն կու գայ ըսգամթի:

ՅԻՌՈՒՆԻՍ: Չ. Բ.



ԱՐՈՒՆԵՍՏՏԵԳՏԱԿԱՆ

ԱՌԵՆՑՐԱԿԱՆ

ԳՈՐԶԻՒՆ ԶՈՐՈՋԵԹՆ Ի ՄՈՐՆ

Պարուի քարածէթն (pétrole) կը գերա-զանցեմ ամերիկեան քարածէթը նոյն իսկ իւր եր-կրորդական օգտակարութեամբը. միայն թէ կա-կասեան վաճառահանութեան (exportation) այս նոր կապակցութեան սկզբնաւորութիւնն, ինչպէս առ հասարակ, ոչ Հայ՝ այլ օտարազգի ձեռնար-

կուներէ (entrepreneurs) եղած է: — Անգղիա-կան Jardine Matheson & Co. ֆիրման Ռի-կայի արուեստական լրագրոյն տեղեկութեանց համեմատ, Société commerciale et industrielle de naphte caspienne de Bacou ընկերութեան միջնորդութեամբը Յունիսի մէջ առաջին ան-գամ 134.000 բուտ (Pud = 16.38 քիլո-կրամ) Պարուի քարածէթ անգղիական Monarch շոգեմառով չգործհամա տարաւ: Այս վաճառքին գարտեան լուրը բաւական եղաւ ամերիկեան քարածէթին գինն իջեցնելու Տոն տեղուան վաճառատեղոյն մէջ: Այս առաջին յար-դութեան վրայ Jardine Matheson & Co. ֆիր-ման աւելի մեծ քանակութիւն մ'իսկոյն գնեց ի Պաթում: Ստուգիւ անակնաւ յարդութիւն ունեցաւ այս առաջին փորձը. քիչ ժամանակուան մէջ բոլոր վաճառքը 2.05 ստերլինի առ Հա-րիւր քիլոկրամ ծախուեցաւ: Ճարմայցիք Պարուի քարածէթին անոր համար գերազանցութիւն կու տան քան ամերիկեանին, որովհետեւ ամե-րիկեանն ջերմութեան որոշ աստիճանի մէջ կրնայ բորբոքիլ: Ճարմոնի լրագիրք իսկ ի նպաստ Պարուի քարածէթին յայտնի կը խօսին եւ ի նմին կը նկատեն ցարդ մենավաճառեալ ամերի-կեան սուղ ու վտանգաւոր քարածէթին յաշ-թանակող հակառակորդը:

Կը յորդորենք մեր հայազգի վաճառական-ներն, որ չափայի, Սինկափորի եւ այլ ազգային անուանի վաճառականաց հետ յարաբերութեան մէջ մտնեն, եւ փոխանակ անգղիացի շահագի-տաց հետ Պարուի քարածէթի գործը կատարե-լու՝ նոյնն ազգային վաճառականաց ձեռքը տան, եւ ասով թէ քարածէթի գործն եւ թէ չա-բանի հրապարակն ազգայնոց ձեռքը մնայ:

ՄԱՆԵԼԱՆ ԵՐ ՏԱՐԻՆՎ ՄԸ

Պաղղկական լրագիրք կը ծանուցանեն, որ կասպից ծովուն եզրերը մանկու նոր առևակ մը գտնուած է: Տունը տեղացիներէն կանգ կ'անուանուի. անոր կը բաւարի եւ կը բարձ-րանայ 10 ոտնաչափ, իսկ բարձրիցն է 2—3 սանդիմեդր. M. O. Blankenburg քիմիագէտն ու երկրաբանն, որ կանափի զննութիւնն իւր մաս-նագիտութեան նիւթ ըրած է, զգուշաւոր մշա-կութեամբ ու արուեստգիտական գարմանմամբ յարողաց' կանափէ մանկու ընտիր նիւթ մը յա-ռաջ բերել: Ասիկայ կակուղ, առաձգական եւ մետաքսազգի է. թելերը շատ դիմացկուն են եւ